

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Կովկասի Տ. Փոխարքան իւր 3 դեկտ. 1913 թիւ գրութեամբ զիմելով Ազգիս Վեհափառ Հայրապետին՝ յայտնում է թէ նորին Սրբութիւնն արդեօք չի կամենալ Աստրախանի թեմից բաժանել հիւսիսային Կովկասի Թերեքեան և Կուրանեան շրջաններն ու միացնել հոգեոր վարչական տեսակէտից իւր փոխարքայութեան միւս հայոց թեմերի հետ և կամ այդ երկու շրջաններից կազմել մի այլ թեմ։ Այլ և առաջարկում է Վեհափառ Կաթուղիկոսին Պօլոժենիայի 1165—1168 յօդուածները, որոնք վերաբերում են Ռուսակայոց թեմերի կազմութեան՝ Ենթարկել վերաքննութեան թեմերը շատացնելու տեսակէտից։ Այս վերջին առաջարկութիւնը Տ. Փոխարքան անում է համաձայն Նախարարութեան այդ մասին իրեն ուղած գրութեան։ Տ. Փոխարքան բացադրում է՝ որ թեմերի թիւը շատացնելու առաջարկութիւնը կապ ունի Ռուսահայոց ձայների թիւը կաթուղ. ընտրութեան ժամանակ ցանկալի չափով աւելացնելու խնդրի հետո։

Բացի գորանից գեռ ևս անցեալ 1913 թ. մարտ ամսին Կովկասի Տ. Փոխարքայի նախկին օգնական վսեմ Շատիլովը զիմել էր Վեհափառ Հայրապետին կաթուղիկոսական ընտրութեանց վերաբերեալ հետևեալ ինդիրներով։

1) Ենկատի առնելով՝ որ Ռուսահայոց ձայների թիւը կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ համեմատաբար Տաճկահայոց ձայներից շատ քիչ է, պէտք է ուրեմն շատացնել Ռուսահայոց ձայների թիւը։ Տաճկահայերը մասնակցում են կաթ. ընտրութեանց 47 թեմերի երկուական ներկայացուցիչներով=94 ձայն, իսկ Ռուսահայերը ունեն վեց թեմի 12 ձայն, Անսոզի բոլոր 8 անդամների և էջմիածնի վանքի 7 ներկայացուցիչների ձայները, այլ և Պարսկաստանի 2 թեմերի 4 ձայնը, Եւրոպայի և Ամերիկայի երկու թեմերի 4 ձայնը՝ ընդամենայն 35 ձայն։

2) Թէ արդեօք պատգամաւորը կարող է ունենալ մի ձայնից աւելի՝ յանձնարարուած ուրիշ թեմերից:

3) Թէ արդեօք թեմը կարող է ընարել իւր ներկայացուցիչն ուրիշ թեմի ժողովրդից:

4) Արդեօք կաթուղիկոսական կանդիտատը կարելի է ընարել բացի եպիսկոպոսական աստիճանն ունեցողներից, նաև այլ հոգեոր աստիճանաւորներից:

5) Լաւ չի լինի արդեօք զաղանի քուէարկութեամբ անել ընտրութիւնը ոչ միայն երկուսի ժամանակ, այլ և քառանուն ցանկը կազմելիս:

Բացի առաջարկուած հարցերից՝ Տ. Փոխարքան խընդուում է Վեհափառի կարծիքը և այլ փոփոխութիւնների մասին՝ որ Վեհափառը կարեոր կը համարի անել 1843 և 1865 թ. կաթուղիկոսական ընտրական կանոնադրութեանց մէջ:

Այս առթիւ Վեհափառն ըարեհաճել է անցեալ դեկտ. ամսին յատուկ կոնդակով նշանակել մի Յանձնաժողով՝ նախագահութեամբ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի, անդամակցութեամբ Տ. Տարապետ, Բագրատ, Մատթէոս եպիսկոպոսների և Տ. Բարդէն վարդապետի: Յանձնաժողովը մի քանի նիստ ունենալով այդ առթիւ վերամշակել է եղած կանոնադրութիւնը կաթուղ, ընտրութեանց և քննութեան առել թեմերը շատացնելու վերաբերեալ խնդիրները ուներկայացըել ի բարեհաճ տնօրէնութիւն նորին Վեհափառութեան:

Եղած փոփոխութեանց մասին կաշխատենք այլ անդամ հաղորդել ի դիտութիւն ընթերցողների:

1906 թ. Փարիզում հիմնուել է մի խումբ հայերի նախաձեռնութեամբ «Փարիզի Հայկական Միութիւն» որի վերջին 17-րդ յօդուածը հետեւեալն է. «Այն պարագային ուր ընկերութիւնը լուծուի, իր գրամագլուխն ու բոլոր գոյքերը պիտի յանձնուեն կէսը ամենայն Հայոց կաթուղիկոսին, կէսը Պօլսոյ Հայոց Պատրիարքին՝ Հայ ժողովրդի կրթական գործին յատկացուելու համար»: Այս ընկերութիւնն արդէն լուծուած է և նորա անդամ դանձապահ մեծարգոյ Համբարձում Մելիքեանն համաձայն կանոնադրու-